ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ 5

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ 5»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Երևան-2024

ՀՏԴ
ԳՄԴ
Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Իմ հայրենիքը 5» աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար, Գրիգորյան Հ. Ի., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ. Վ., Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Եր.: Էդիթ Պրինտ, 2024. - 32 էջ

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 29.02.2024 թվականի 284-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ մ. գ. թ., դոցենտ Ա. Հ. Սվաջյան

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ. Ռ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Հովյան Գ. Ռ.

Հեղինակներ՝
Գրիգորյան Հ. Ի., պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Ս. Ս.
Օհանյան Հ. Վ.

Համակարգչային ձևավորում՝ Խուդավերդյան Դ. Գ., Դավթյան Հ. Լ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Սույն ուղեցույցի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների հինգերորդ դասարանի «Իմ հայրենիքը 5» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN **ՀՏԴ**
Տպաքանակը՝ 150 օրինակ **ԳՄԴ**

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ 7

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 31

ՆԱԽԱԲԱՆ

Սույն մեթոդական ուղեցույցը մշակված է «Իմ հայրենիքը 5» հարմարեցված աշխատանքային գիրք-տետրով ուսումնառության արդյունավետ կազմակերպման համար ուսուցչին մեթոդական աջակցություն տրամադրելու նպատակով: Աշխատանքային գիրք-տետրով ուսումնական գործունեության կազմակերպումը հնարավորություն կընձեռի սովորողների մոտ խթանել հետաքրքրությունը «Իմ հայրենիքը» առարկայի նկատմամբ: Տեքստի հետ աշխատելը կզարգացնի ոչ միայն տեքստը կարդալու և հասկանալու կարողությունը, այլև երեխաների հմտությունները՝ ընդգծելու կարևորը, գտնելու հիմնական հարցերի պատասխանները: Առաջադրանքները կատարելիս երբեմն անհրաժեշտ կլինեն ուսուցչի, ուսուցչի օգնականի կամ ծնողի աջակցությունը, նրանց կողմից տրվող փոքրիկ հուշումները: Հարկ է նշել, որ կան առաջադրանքներ, որոնք նախատեսված են զույգերով կամ խմբային աշխատանքների համար, ինչը կնպաստի ներառական կրթական միջավայրի ձևավորմանը: Յուրաքանչյուր թեմայի համար մշակված առաջադրանքները կնպաստեն աշակերտի հիշողության զարգացմանը, ինչպես նաև՝ միջառարկայական կապի վրա հիմնված գիտելիքների ձեռքբերմանը:

Հայրենիքը ճանաչելու համար անհրաժեշտ է ունենալ գիտելիքներ շրջապատող աշխարհի մասին, իմանալ պետության սահմանները, հասկանալ ու պատկերացնել, թե ինչ է պատմական հայրենիքը: «Իմ հայրենիքը 5» աշխատանքային գիրք-տետրը հնարավորություն կտա իմանալ ընտանիքի և նրա կառուցվածքի, ինչպես նաև գաղափար կազմել պետության, նրա խորհրդանիշների մասին, ծանոթանալ մեր «մեծ» և «փոքր» հայրենիքին, ազգային

ավանդույթներին, ճանաչել մեր երկրում ապրող ազգային փոքրամասնություններին:

«Իմ հայրենիքը» առարկան դպրոցում ուսուցանվող պատմական գիտելիքներ մատուցող առաջին առարկան է, որն աշակերտի մոտ կզարգացնի ազգային արժեքների հիմնական սկզբունքները, հնարավորություն կընձեռի ճանաչել հայրենիքը:

Առաջադրանքները կազմված են այնպիսի բովանդակությամբ, որ ձեռք բերած գիտելիքներն աշակերտները կարողանան կիրառել հաջորդ ուսումնական տարիներին պատմողական այլ առարկաներ ուսումնասիրելիս: Աշխատանքային գիրք-տետրը կառուցված է հայրենաճանաչության անմիջական ընկալումների, այդ ընկալումները զուգորդելու, վերլուծելու, ընդհանրացնելու սկզբունքով: Բովանդակությունը միտված է հայրենաճանաչության նախնական գիտելիքների հաղորդմանը, բարոյական, մարդասիրական, գեղարվեստական, աշխատանքային սկզբունքների ձևավորմանը, գեղարվեստական-տեխնոլոգիական գործունեության միջոցների յուրացմանը, աշակերտի ստեղծագործական ունակությունների բացահայտմանն ու զարգացմանը:

Նշենք, որ յուրաքանչյուր առաջադրանք ունի գնահատող, սովորեցնող և զարգացնող բնույթ: Առաջադրանքները ձևակերպելիս հաշվի են առնվել աշխատանքի անհատական և խմբային ձևերը: Անհատական աշխատանքում սովորողները յուրացնում են աշխատանքի նոր տեխնիկաներ, ձեռք բերում պատմական տարրական գիտելիքներ: Խմբային աշխատանքներում աշակերտները սովորում են ծրագրել և համակարգել իրենց գործունեությունը, համաձայնության հասնել առաջադրանքի կատարման բովանդակության և ընթացքի հարցում, աշխատել կամ սովորել համագործակցային մթնոլորտում: Ընդհանուր առմամբ,

աշխատանքային գիրք-տետրում առաջարկվում է այնպիսի մոտեցում ուսումնական գործընթացին, որը ենթադրում է ուսուցչի գործունեության բազմազանություն, ուսումնական գործընթացին ստեղծագործաբար մոտենալու ինքնուրույնություն, աշակերտների անհատականության դրսևորման խրախուսում: Հարմարեցված գիրք-տետրով աշխատելը սովորողին թույլ կտա ինքնուրույն մտածել, տրամաբանել, գործողություններ կատարել՝ մտքում ունենալով «ի՞նչ և ինչպե՞ս անել» հարցը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Առաջադրանք 1. Գրի՛ր/անվանի՛ր պատասխանը: Իմ պետությունը: Իմ մայրաքաղաքը:

Աշակերտն առաջին անգամ պետք է աշխատի քարտեզով, ծանոթանա Հայկական լեռնաշխարհին և Հայաստանի Հանրապետությանը, հասկանա՝ ինչ է հայրենիք հասկացությունը: Հայրենիքը պետք է նույնականացնի Հայկական լեռնաշխարհի և Հայաստանի Հանրապետության հետ: Աշակերտը տրված տողերի վրա գրում է պատասխանը: Գրելու դժվարություններ ունեցող երեխաները կարող են բանավոր պատասխանել հարցերին կամ աշխատել դասընկերոջ հետ: Անհրաժեշտության դեպքում կարելի է մի քանի անգամ կրկնել վարժությունը ամբողջովին յուրացնելու համար:

Առաջադրանք 2.

ա. Ներկի՛ր քարտեզն ըստ օրինակի: Անվանի՛ր/ցո՛ւյց տուր մարզերը:

բ. Կարմիր մատիտով եզրագծի՛ր քո մարզը:

Այս առաջադրանքը բաղկացած է երկու մասից: Աշակերտն ինքնուրույն կամ ուսուցչի հետ միասին ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության քարտեզը: Գտնում է այն մարզը, որտեղ ինքը բնակվում է: Այնուհետև փորձում է ուրվագծային քարտեզի վրա կարմիր մատիտով եզրագծել այն մարզը, որտեղ բնակվում է: Որպես լրացուցիչ աշխատանք՝ աշակերտը ուսուցչի օգնությամբ կարող է եզրագծել նաև այլ մարզ. օրինակ՝ որտեղ ապրում են տատիկը և պապիկը, կամ որտեղ եղել է ինքը: Դժվարանալու դեպքում կարելի է հուշումներ տրամադրել կամ ուղղորդել:

Առաջադրանք 3.

ա. Նայի՛ր քարտեզին և ներքևում գրի՛ր/անվանի՛ր մարզկենտրոնները:

Առաջադրանքը բաղկացած է երկու մասից: Այս առաջադրանքի նպատակն է, որպեսզի աշակերտը ծանոթանա Հայաստանի Հանրապետության մյուս մարզերին: Առաջին մասում աշակերտը պետք է ուսումնասիրի առաջադրանք 2-ի քարտեզը և ներքևում գրի մարզկենտրոնները: Ընթերցանության դժվարություն ունեցող երեխաների համար կարելի է բարձրաձայն կարդալ մարզերն ու մարզկենտրոնները՝ քարտեզի վրա ցույց տալով համապատասխան անունները: Գրավոր խոսքի դժվարություններ ունեցող երեխաները կարող են բանավոր կատարել վարժությունը կամ օգտվել աշխատանքի օրինակից: Կարելի է մարզկենտրոնների համար հատկացված տեղերում նշում կատարել քարտեզում յուրաքանչյուր մարզին համապատասխանող գույնով: Անհրաժեշտության դեպքում կարելի է մի քանի անգամ կրկնել վարժությունը նյութը յուրացնելու համար:

բ. Գրի՛ր/անվանի՛ր այն քաղաքը կամ գյուղը, որտեղ դու ապրում ես:

Առաջադրանքի երկրորդ մասում աշակերտը պետք է գրի, թե որտեղ է ինքը բնակվում, կամ նշի բնակավայրի անվանումը: Դժվարությունների դեպքում կարող է օգտվել օրինակից, հուշումներից և պատասխանել հարցերին բանավոր տարբերակով:

Առաջադրանք 4. Հավելվածից վերցրո՛ւ երկրի անվանումը և փակցրո՛ւ քարտեզի ճիշտ տեղում (Հավելված 1):

Այս առաջադրանքը կատարելիս աշակերտը պետք է կարողանա քարտեզի վրա ճշգրիտ ցույց տալ Հայաստանի

Հանրապետության հարևան բոլոր երկրները, ինչպես նաև արտասանել այդ երկրների անվանումները: Առաջադրանքը կատարելուց առաջ աշակերտը ուսուցչի հետ միասին ուսումնասիրում է տարածաշրջանի քարտեզը: Այնուհետև աշակերտը բացում է հավելվածը, այնտեղից ըստ երկրի պատկերված գույնի վերցնում է երկրի անվանումը և փակցնում քարտեզի վրա համապատասխան տեղում: Դժվարությունների դեպքում կարելի է տրամադրել խոսքային և ֆիզիկական հուշումներ:

Առաջադրանք 5.

ա. Քարտեզի վրա ցո՛ւյց տուր/անվանի՛ր այն վայրերը, որտեղ դու եղել ես կամ կցանկանաս լինել:

բ. Ներքևում գրի՛ր այդ վայրերի անվանումները: Ընկերոջդ պատմի՛ր քեզ ամենաշատը դուր եկած վայրի մասին:

Այս առաջադրանքը կատարելիս աշակերտը տեսողական աջակցության միջոցով հնարավորություն կունենա ծանոթանալ Հայաստանի Հանրապետության նշանավոր պատմական հուշարձաններին: Միաժամանակ, աշակերտը կարող է դասարանում պատմել այն հուշավայրի մասին, որտեղ ինքը եղել է: Առաջադրանքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում աշակերտն ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության քարտեզը, փորձում հիշել՝ քարտեզում պատկերված վայրերից որտեղ է եղել կամ որ վայրի մասին է լսել, որտեղ կցանկանա լինել: Առաջադրանքի երկրորդ մասում աշակերտը ներքևում հատկացված տողերում գրում է այն վայրերի անունները, որոնք պատկերված են քարտեզում: Դժվարությունների դեպքում կարելի է կիրառել հուշումներ, ինչպես նաև օգտագործել տեսանյութեր, հուշարձանների և տեսարժան վայրերի նկարներ:

Առաջադրանք 6. Տոհմածառի վրա գրի՛ր քո ընտանիքի անդամների անունները: Ներկի՛ր տոհմածառը:

Այս առաջադրանքում աշակերտը ծանոթանում է ընտանիքի կառուցվածքին: Նպատակն է՝ կարողանալ բացատրել իր ընտանիքի կառուցվածքը: Աշակերտին բացատրվում է, թե ի՞նչ է տոհմածառը, ինչպե՞ս են այն պատկերում: Առաջադրանքը կատարելիս աշակերտը սովորում է տարբերակել մեծ ընտանիք և փոքր ընտանիք գաղափարները: Ուսուցիչը կարող է նաև բացատրել, թե հին ժամանակներում ինչպիսի կառուցվածք է ունեցել ընտանիքը և ներկայացնել, թե ինչ է **գերդաստանը**: Հնում ընտանիքը անվանվել է նաև **ծուխ**: Ուսուցիչը աշակերտներին բացատրում է, թե որտեղից է գալիս ծուխ արտահայտությունը, ներկայացնում է տան կառուցվածքը և բացատրում, թե ինչու էին ժամանակին տան տանիքին անցք բաց թողնում, որն էլ կոչվում էր **երդ**: Առաջադրանքում պատկերված է տոհմածառ: Աշակերտը ուսումնասիրում է պատկերված տոհմածառը, վերցնում է տարբեր գույնի գրիչներ, ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ տարբեր գույներով գրում ընտանիքի անդամների անունները: Նա կարող է նաև տարբեր գույներով ներկել տոհմածառը: Դասարանում կամ տանը աշակերտը կարող է ինքնուրույն նկարել տոհմածառ և նշել իր ընտանիքի անդամներին, պատկերել հայկական ավանդական տուն, որն ունի երդիկ:

Առաջադրանք 7. Քարտեզի վրա ցո՛ւյց տուր/ներկի՛ր Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերը և գետերը:

Հայկական լեռնաշխարհը հարուստ է գետերով և լճերով: Իրավամբ Հայկական լեռնաշխարհը համարվում է տարածաշրջանի ջրաբաշխ գոտին: Այստեղից են սկիզբ առնում տարածաշրջանի խոշոր գետեր Եփրատը, Տիգրիսը, Կուրը, Ճորոխը և Արաքսը: Մեր

լեռնաշխարհում կան բազմաթիվ լճեր, որոնցից խոշորներն են Սևանը, Վանը և Ուրմիան: Այս առաջադրանքը կատարելիս մեր նպատակն է, որ աշակերտը դասագրքով կամ ատլասի միջոցով ուսումնասիրի Հայկական լեռնաշխարհի ֆիզիկական քարտեզը, տարբերակի, թե ինչ գույներով են սովորաբար ներկում ջրային տարածքները, դաշտերն ու հարթավայրերը, նախալեռնային ու լեռնային գոտիները: Աշակերտը ուսուցչի հետ միասին քարտեզի վրա պետք է ցույց տա գետերն ու լճերը, որից հետո ուրվագծային քարտեզի վրա գրի համապատասխան գետերի և լճերի անունները: Որպես լրացուցիչ աշխատանք՝ ուսուցչի օգնությամբ աշակերտը կարող է շագանակագույն մատիտով նշել և ներկել Հայկական լեռնաշխարհի խոշոր լեռնաշղթաները և լեռնագագաթները, մասնավորապես Արարատ և Արագած լեռները: Այս քարտեզի վրա պատկերված են նաև Մեծ Հայքի նահանգների վարչական սահմանները: Ուրվագծային քարտեզի վրա աշակերտը կարող է ուսուցչի օգնությամբ ըստ սահմանների տարբեր գույներով ներկել Մեծ Հայքի նահագները, նշել դրանք և վերջում արտասանել նահանգների անունները: Այս առաջադրանքը կատարելով՝ աշակերտը վերջում կկարողանա ֆիզիկական քարտեզի վրա տարբերակել գետերը, լճերը, լեռները, ինչպես նաև նահանգները:

Առաջադրանք 8. Ո՞ր ձկնատեսակներով է հայտնի Սևանա լիճը: Ճիշտ պատասխանները մատիտով միացրո՛ւ լճին:

Հայկական լեռնաշխարհը հարուստ է բուսական և կենդանական աշխարհով: Սևանա լիճը ևս միշտ հարուստ է եղել ձկնատեսակներով՝ ի տարբերություն Վանա լճի, որն ունի միայն մեկ ձկնատեսակ՝ տառեխը, և Ուրմիան, որի ջուրն այնքան աղի է, որ այդ լիճը զուրկ է կենդանական և բուսական աշխարհից: Այս

առաջադրանքի նպատակն է, որ աշակերտը կարողանա հստակ իմանալ և տարբերել Սևանա և Վանա լճերում ապրող ձկնատեսակները: Առաջադրանքում պատկերված է միայն Սևանա լիճը և երեք ձկնատեսակ՝ տառեխ, իշխան և սիգ: Աշակերտը պետք է բարձրաձայն կարդա գիրք-տետրում պատկերված երեք ձկնատեսակների անունները, այնուհետև նշի Սևանում բնակվող ձկնատեսակների անունները և պատկերները մատիտով միացնի Սևանա լճի նկարին: Դժվարությունների դեպքում կարելի է կիրառել խոսքային և ֆիզիկական հուշումներ, ինչպես նաև կազմակերպել զույգերով աշխատանք:

Առաջադրանք 9-ը և 10-ը վերաբերում են Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներին:

Առաջադրանք 9.

ա. Գրի՛ր/անվանի՛ր՝ ինչ կենդանիներ են պատկերված զինանշանի երկու կողմերում:

բ. Օգտվելով հավելվածից՝ հավաքի՛ր Հայաստանի Հանրապետության զինանշանի մասերը (Հավելված 2):

գ. Գրի՛ր/անվանի՛ր ՀՀ զինանշանի կենտրոնում պատկերված լեռը: Ներքևում ամբողջականացրո՛ւ Արարատ լեռը:

Այս առաջադրանքը բաղկացած է երեք մասից: Նպատակն է, որպեսզի աշակերտը ծանոթանա Հայաստանի Հանրապետության զինանշանին, նրա ստեղծման պատմությանը: Ուսուցիչը զինանշանը ներկայացնելիս աշակերտին պետք է ասի, որ այն եղել է նաև Առաջին հանրապետության զինանշանը: Նկարում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, որը բաղկացած է մի

քանի տարրերից: Այստեղ առկա են Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները, իսկ կենտրոնում՝ Արարատ բիբլիական լեռը: Զինանշանի կենտրոնական վահանաձև հատվածը պահում են կենդանական աշխարհի երկու արքաները՝ արծիվը և առյուծը: Առաջադրանքի առաջին մասում աշակերտը պետք է զինանշանի ներքևի տողերում գրի, դժվարությունների դեպքում անվանի այդ կենդանիների անունները կամ ցույց տա դրանք: Առաջադրանքի երկրորդ հատվածում աշակերտը օգտվում է հավելվածից, որտեղից վերցնում է հայկական արքայատոհմերի զինանշանների պատկերները և ամրացնում տետրում: Առաջադրանքի երրորդ մասում աշակերտը պետք է գրի կամ դժվարությունների դեպքում օրինակից արտագրի զինանշանի կենտրոնում պատկերված լեռան անունը, այնուհետև, մատիտով կետագծերը միացնելով՝ ամբողջացնի լեռան պատկերը: Առաջադրանքի վերջում աշակերտը պետք է կարողանա ճանաչել և ներկայացնել Հայաստանի Հանրապետության զինանշանը, բացատրի կառուցվածքը:

Առաջադրանք 10. Ներկի՛ր Հայաստանի Հանրապետության դրոշը:

Յուրաքանչյուր պետության գլխավոր խորհրդանիշ համարվում է պետական դրոշը, որն ամրագրված է տվյալ պետության գլխավոր իրավական փաստաթղթի՝ սահմանադրության մեջ: Պետական դրոշի միջոցով մեր երկիրը նաև ներկայանում է միջազգային կառույցներում և մասնակցում միջազգային տարբեր միջոցառումների և մրցումների: Հայաստանի Հանրապետության պետական դրոշը **ԿԱՐՄԻՐ, ԿԱՊՈՒՅՏ և ՆԱՐՆՋԱԳՈՒՅՆ** գույներից բաղկացած եռագույնն է: Աշակերտը, օգտվելով օրինակից, գիրք-տետրում համապատասխան

գույներով ներկում է դրոշի համար թողած ազատ տարածությունը: Առաջադրանքը կատարելուց հետո ուսուցչի հանձնարարությամբ աշակերտը կարող է ընկերների օգնությամբ պատրաստել Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը:

Առաջադրանք 11.

ա. Վերհիշի՛ր հայերենի այբուբենը: Անվանի՛ր տառերի մոտ դրված պատկերները և գրի՛ր ներքևում:

բ. Գրված բառերով կամ այբուբենի պատկերներով կազմի՛ր նախադասություններ:

Պետության խորհրդանիշ կարելի է համարել նաև պետական լեզուն: Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է: Մայրենի լեզուն ոչ միայն պետական խորհրդանիշ է, այլ նաև ազգային մշակույթի մաս է կազմում: Այս առաջադրանքի միջոցով աշակերտը վերհիշում է հայերենի այբուբենը: Առաջադրանքի առաջին մասում աշակերտը ուսուցչի կամ դասընկերոջ օգնությամբ անվանում կամ ցույց է տալիս տառերի մոտ պատկերված նկարները և գրում: Առաջադրանքի երկրորդ մասում աշակերտը ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ նկարների բառերով կազմում է նախադասություններ և գրում ներքևի հատվածում առանձնացված տողերում: Որպես հարմարեցում՝ կարելի է տրամադրել աշխատանքի օրինակ կամ թույլ տալ առաջադրանքը կատարել բանավոր:

Առաջադրանք 12. Գրի՛ր/ասա՝ ուրիշ ի՞նչ լեզուներ գիտես:

Աշխարհում տարբեր ազգեր ունեն տարբեր լեզուներ և մշակույթներ: Դրանք բոլորը յուրահատուկ են: Կարևոր է հարգել յուրաքանչյուր ազգի լեզուն և մշակույթը: Նշված տողում աշակերտը

պետք է գրի, թե ի՞նչ օտար լեզուներ գիտի: Կարելի է նաև աշխատանքը կազմակերպել զույգերով: Սկզբում աշակերտը գրում է իր իմացած լեզուները, այնուհետև հարցնում ընկերոջը: Դժվարությունների դեպքում կարելի է կիրառել հուշումներ:

Առաջադրանք 13. Հայկական տարազ

Ներկի՛ր տարազին բնորոշ չորս գույները, որոնք արտահայտված են հայկական ավանդական հագուստի մեջ:

Յուրաքանչյուր ազգ և ժողովուրդ ունի իր մշակույթը: Մշակույթը տարբերվում է նաև ազգային հագուստով, որը կոչվում է տարազ: Տարազները լինում են տղամարդու և կանացի: Հայաստանում տարբեր վայրերում մարդիկ կրում էին իրարից տարբերվող տարազներ (ավանդական հագուստներ): Դեռ հին ժամանակներից սկսած Հայաստանի ամեն մի տարածաշրջանում մեր նախնիները հագել են իրարից տարբերվող հագուստներ, որոնք պայմանավորված են եղել աշխարհագրական դիրքով և բնակլիմայական պայմաններով: Սակայն բոլոր տարածաշրջաններում առկա են եղել ընդհանուր գունային երանգավորումներ: Միջնադարյան հայ մեծ մտածող, փիլիսոփա Գրիգոր Տաթևացին հայկական տարազի մեջ առանձնացրել է բնության չորս տարրերի՝ հողի, ջրի, օդի և կրակի գույները: Ըստ Տաթևացու՝ դրանք արտահայտում են հողի սևությունը, ջրի սպիտակությունը, օդի կարմիրը և կրակի դեղինը: Այս առաջադրանքում աշակերտն ուսումնասիրում է մշակույթի մաս կազմող ազգային տարազը: Ուսուցչի հետ միասին ուսումնասիրում են Հայաստանի տարբեր տարածաշրջանների հագուստը: Կարող են գտնել ընդհանրական և տարբերվող կողմերը՝ առանձնացնելով դրանք: Առաջադրանքը կատարելիս աշակերտն ուսումնասիրում է

ազգային հագուստը բնորոշող գույները, դրանք նույն ձևով ներկում ներքևում գտնվող օղակների մեջ:

Առաջադրանք 14. Օգտվելով հավելվածից՝ վերցրո՛ւ համապատասխան տարազները, հագցրո՛ւ տղային և աղջկան (Հավելված 3):

Այս առաջադրանքը պետք է կապել նախորդ առաջադրանքի հետ: Աշակերտը պետք է հավելվածից վերցնի տարազի պատկերները և համապատասխան հագուստները փակցնի տղայի և աղջկա նկարների վրա:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐ

Առաջադրանք 15.

ա. Օգտվելով հավելվածից՝ ստացի՛ր աղաման (Հավելված 4):

բ. Փորձի՛ր պատրաստել աղաման կավից կամ ծեփամածիկից:

Ազգերը և ժողովուրդները միմյանցից տարբերվում են նաև իրենց ուտեստներով: Յուրաքանչյուր ազգ ունի իր խոհանոցը, որն անվանվում է այդ ազգի կամ ժողովրդի անունով: Ազգային խոհանոցներն ունեն կերակրատեսակներ, որոնք բնորոշ են կոնկրետ այդ ազգի կենցաղին կամ առօրյա կյանքին: Կան կերակրատեսակներ, որոնք ժամանակի ընթացքում լայն տարածում են գտել, և այսօր աշխարհի շատ երկրներում օգտագործում են իրենց ազգային կերակուրների հետ միասին: Ցանկացած ազգի խոհանոցում համեղ կերակուր ստանալու համար անհրաժեշտ է օգտագործել աղ: Աղը հնագույն ժամանակներից սկսած խիստ անհրաժեշտ է եղել խոհանոցում: Աղի մասին կան բազմաթիվ հետաքրքիր պատմություններ: Հայկական լեռնաշխարհում աղը

համարվել է կյանքի և երջանկության խորհրդանիշ: Աղը համարվում էր նաև այն օգտակար հանածոն, առանց որի կյանքը կանգ կառներ: Հին ժամանակներում աղը պաշտամունքի առարկա է եղել և կապվել է պտղաբերության հետ: Աղի հետ կապված բոլոր սովորույթներն ու ավանդությունները, որոնք մինչ օրս էլ գործածական են, պատկերացում են տալիս այն մասին, թե ինչ կարևորություն ունի այն հայերի կենցաղում: Այս առաջադրանքը կատարելիս անհրաժեշտ է աշակերտին հիմնովին բացատրել աղի դերն ու նշանակությունը Հայոց մեջ, նրա օգտակար հատկությունները, ինչպես նաև տեղեկացնել, թե ինչ վատ հետևանքների կարող է հանգեցնել աղի չարաշահումը: Հայկական ավանդական աղամաններն ունեն կնոջ կերպար, որն առնչվում է Անահիտ աստվածուհու պաշտամունքին: Նմանատիպ աղամանների կենտրոնում կա բացվածք, որտեղից լցվում է աղը:

Այս առաջադրանքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում աշակերտը օգտվում է հավելվածից և կպչուն կտորներով ստանում աղաման: Երկրորդ մասում ուսուցիչը աշակերտին հանձնարարում է տանը կամ դպրոցում ծեփամածիկից պատրաստել հայկական աղաման: Առաջադրանքի վերջում աշակերտը պետք է կարողանա բացատրել աղի դերը հայերի կենցաղում և պատրաստի աղաման:

Առաջադրանք 16. Օգտվելով հավելվածից՝ հավաքի՛ր կոլաժ «Աղջիկն ու տղան աղ ու հացով դիմավորում են հյուրերին» (Հավելված 5):

Հայ և այլ ժողովուրդների ավանդույթի համաձայն՝ շատ հարգելի հյուրերին դիմավորել են աղ ու հացով: Ծիսական այս սովորույթը եղել է հարգանքի, հարստության, առատության, բարեկամության, հավատարմության և բարեհաջողության

խորհրդանիշ: Հնուց հացը համարվել է սրբություն, իսկ աղն ունեցել է մաքրագործող հատկություն: Մենք սովորաբար մեզ համար կարևոր հյուրերին դիմավորում ենք աղ ու հացով: Մեր ժողովուրդն ունի աղի ու հացի հետ կապված բազմաթիվ ավանդապատումներ, առակներ, առած-ասացվածքներ և այլն: Այս առաջադրանքում աշակերտը ինքնուրույն կամ դասընկերոջ օգնությամբ հավելված 5-ից պոկում է կպչուն նկարները և հավաքում կոլաժ, որտեղ տղան ու աղջիկը աղ ու հացով դիմավորում են հյուրերին: Առաջադրանքի վերջում աշակերտը կարող է պատմել նկարը: Դժվարությունների դեպքում կարելի է տալ հուշող հարցեր: Բանավոր խոսքի դժվարության դեպքում աշակերտը կարող է պատասխանել հարցերին նկարների միջոցով:

Առաջադրանքի վերջում աշակերտը պետք է կարողանա բացատրել աղ ու հացի հետ կապված ավանդույթները, փորձի ներկայացնել հյուրերին աղ ու հացով դիմավորելու կարգը:

Հայկական լավաշ

Մեր ավանդական հացը լավաշն է: Այն ամբողջ աշխարհում ճանաչում են որպես հայկական հաց: Հայկական լեռնաշխարհում հացը թխել են դեռ հազարամյակներ առաջ: Հնում լավաշը թխում էին թոնրի մեջ: Սովորաբար թոնիրը տեղադրում էին տան կենտրոնում և նրա վերևում անցք թողնում, որն անվանում ենք երդիկ: Մարդիկ ցորեն էին ցանում, հավաքած ցորենը աղում, ստանում ալյուր, այնուհետև թոնրի մեջ թխում լավաշ: Լավաշ թխելը մի առանձնահատուկ արարողություն էր: Լավաշը մեկ մարդ չէր կարող թխել, այդ իսկ պատճառով սովորաբար այն թխում էին գերդաստանի կանայք և աղջիկները, կամ գյուղական համայնքի հարևան կանայք: Հաց թխելու գործընթացում ամեն մեկն ուներ իր աշխատանքը: Ուսուցիչը պետք է բացատրի աշակերտներին, թե հացը ինչ կարևոր

դեր է զբաղեցրել մեր առօրյայում: Ինչո՞ւ են հացի հետ կապված ավանդույթները այդքան շատ, և անգամ հացի մասին կան բազմաթիվ հեքիաթներ:

Առաջադրանք 17. Օգտվելով հավելվածի նկարներից՝ պատրաստի՛ր խաղողի թփով տոլմա (Հավելված 6):

Ինչպես ամեն ազգ ու ժողովուրդ ունի իր առանձնահատուկ տարազը, այդպես էլ յուրաքանչյուր ազգ ունի իր ավանդական կերակրատեսակը: Հայկական խոհանոցի հիմնական կերակրատեսակները մսից տարբեր եղանակներով պատրաստված ուտելիքներն են: Հայաստանի տարածքում վաղուց զարգացած է եղել անասնաբուծությունը, մարդիկ պահել են կովեր, խոզեր, ոչխարներ և այլ ընտանի կենդանիներ՝ նրանցից միս և այլ բնամթերք ստանալու համար:

Հայկական սեղաններին միշտ եղել են տարբեր կենդանիների մսից պատրաստված կերակրատեսակներ: Ամենատարածված կերակուրը հայկական տոլման է: Այն հիմնականում պատրաստում են ծեծած, մանր կտրտած կամ աղացած մսից, որին ավելացնում են ցորեն, ձավար կամ բրինձ և փաթաթում խաղողի կամ կաղամբի խաշած տերևներով: Հայկական եկեղեցական տոներին նախորդող շրջանն անվանում ենք պահոց կամ պահքի: Այս ժամանակահատվածում հայկական ընտանիքներում նույնպես պատրաստում էին տոլմա, սակայն այն առանց մսի էր: Այդ տոլման անվանում ենք պասուց տոլմա: Այս առաջադրանքում աշակերտն օգտվում է հավելված 6-ից: Կտրում է խաղողի տերևը, այնուհետև կտրում է աղացած մսի նկարը, «միսը» տեղադրում «խաղողի տերևի» վրա և փորձում այն փաթաթել: Ուսուցչի հանձնարարությամբ աշակերտը կարող է տանը մասնակից լինել տոլմայի պատրաստման

գործընթացին: Այս առաջադրանքը կատարելիս աշակերտի մոտ կարող է առաջանալ հետաքրքրություն հայկական ավանդական ուտեստ պատրաստելու նկատմամբ:

Հայկական ավանդական և հին կերակուրներից է **հարիսան**: Հարիսան ավանդաբար մատուցվում է Զատկի օրը և համարվում է հայկական ազգային կերակուր: Դա խիտ շիլա է, որը պատրաստվում է կորկոտից (ցորեն) և հավի կամ գառան յուղոտ մսից: Հարիսան հայտնի է նրանով, որ 1915 թվականին Մուսա լեռան հերոսական պաշտպանության ընթացքում (Օսմանյան կայսրություն) լեռան վրա հայերը կարողացան դիմակայել քաղցին, գոյատևել ու դիմադրություն ցույց տալ թշնամուն՝ սնվելով հարիսայով: Ուսուցչի հանձնարարությամբ աշակերտը տանը ինքուրույն կամ ծնողի օգնությամբ տեղեկություններ է ձեռք բերում Մուսա լեռան ինքնապաշտպանության ժամանակ հարիսայի պատրաստման մասին: Այնուհետև աշակերտը կարող է ներկայացնել, թե ինչպես են ամեն տարի սեպտեմբեր ամսին նշում Մուսա լեռան պաշտպանության օրը Հայաստանի Հանրապետությունում՝ հարիսա պատրաստելով: Ամեն տարի տոնակատարության ժամանակ հարիսայի մեկ կաթսա է ավելանում: Դա կապված է Մուսա լեռան պաշտպանության տարելիցի փոփոխման հետ: Կարելի է այս առաջադրանքի կատարման ընթացքի մեջ ներգրավել ողջ դասարանին, և միասին որոշել, թե քանի՞ կաթսա հարիսա կպատրաստեն այս տարվա տոնակատարության ժամանակ:

Առաջադրանք 18. Գրի՛ր/անվանի՛ր քո նախընտրած հայկական կերակուրը կամ կերակուրները:

Այս առաջադրանքը կատարելիս աշակերտը ներքևում հատկացված տողերում–ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ գրում

է, թե որն է իր սիրած հայկական կերակուրը: Այնուհետև, դասարանում պատմում է այդ կերակրատեսակի մասին, նկարագրում, թե ինչպես է այն պատրաստվում: Այս առաջադրանքի նպատակն է կիսվել ունեցած տեղեկությամբ և բանավոր խոսքի միջոցով հաղորդակցվել ընկերների հետ:

Ազգային տոներ

Մենք ունենք մեր սովորույթները:

Սովորույթը մեր գործողություններն են, որոնք մենք անում ենք հաճախ կամ մշտապես:

Ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդները, հայ ժողովուրդը նույնպես ունի ավանդական ազգային տոներ: Տոն է, երբ մենք նշում ենք մեզ համար կարևոր օրերը: Կան նաև պետական տոներ, օրինակ՝ Անկախության տոնը, Սահմանադրության օրը, Հաղթանակի տոնը և այլն: Եկեղեցին նույնպես ունի իր տոները՝ Սուրբ Ծնունդ, Տեառնընդառաջ, Սուրբ Հարություն, Վարդավառ, Սուրբ Խաչի տոն և այլն: Մեր օրերում Սուրբ Ծննդյան տոնի և Ամանորի խորհրդանիշն է տոնական զարդարված տոնածառը: Առաջին անգամ Սուրբ Ծննդյան տոնածառը զարդարվել է Գերմանիայում 16-րդ դարում:

Մարդիկ սովորաբար ամեն տարի բարեկամների կամ հարազատների հետ տոնում են իրենց ծննդյան օրը: Դա անձնական տոն է: Իսկ յուրաքանչյուր տարի սեպտեմբերի 21-ին մենք նշում ենք Հայաստանի Հանրապետության անկախության տոնը, որը պետական տոն է: Հայկական տոնացույցում կան նաև եկեղեցական տոներ, որոնք պետական չեն, բայց Հայ առաքելական եկեղեցու հետևորդները անպայման այդ տոները նշում են, օրինակ՝ Հիսուս Քրիստոսի Հարության տոնը, կամ ինչպես ընդունված է անվանել ժողովրդի մեջ՝ Զատիկը:

Առաջադրանք 19. Զարդարի՛ր տոնածառը գույնզգույն պատկերներով:

Մեր օրերում Սուրբ Ծննդյան տոնի և Ամանորի խորհրդանիշն է զարդարված տոնածառը: Առաջին անգամ Սուրբ Ծննդյան տոնածառը զարդարվել է Գերմանիայում 16-րդ դարում: Այսօր մենք մեր դպրոցում, ծնողների աշխատավայրում և տանը զարդարում ենք կանաչ եղևնին՝ տոնական գույներ ու շուք հաղորդելով նրան: Առաջադրանքը կատարելիս աշակերտը պետք է գույնզգույն պատկերներով զարդարի գիրք-տետրում նկարված տոնածառը: Առաջադրանքի նպատակն է աշակերտների մոտ զարգացնել գեղագիտական ճաշակ և էվրիստիկական մտածողություն:

Սուրբ Ծնունդ

Քրիստոնյաները հավատում էին, թե որոշ ծառեր ժամանակից շուտ ծաղկում են Սուրբ Ծննդյան տոնից առաջ: Դա ընդունվում էր որպես Հիսուսի ծննդյան հանդեպ հարգանքի խորհրդանիշ: Սուրբ Ծննդյան տոնը Հայ առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է, որը նշում ենք առանձնահատուկ խանդավառությամբ: Այդ տոնը կապվում է նոր աշխարհի ստեղծման և մարդկության փրկության հետ: Ըստ հայկական եկեղեցական տոնի՝ Սուրբ Ծննդյան հաջորդ օրը տեղի է ունենում Ջրօրհնեքը: Ջրօրհնեքի արարողության ժամանակ ջրի մեջ իջեցվում է Ս. Խաչը, այնուհետև ջուրը օրհնում են սուրբ Մյուռոնով, որը խորհրդանշում է Հորդանան գետում Հիսուս Քրիստոսի մկրտությունը:

Առաջադրանք 20. Օգտվելով հավելվածի նկարներից՝ հավաքի՛ր Տեառնընդառաջի կոլաժը և պատմի՛ր ընկերոջդ տոնի մասին (Հավելված 7):

Փետրվարի կեսին Հայաստանում նշում են Տրնդեզը կամ Տեառնընդառաջ տոնը, որը մեզ է հասել շատ հին ժամանակներից: Այդ օրն ընդունված է խարույկ վառել, որի վրայով պետք է թռչեն նորապսակները՝ նոր ամուսնացած զույգերը: Այդ օրը ունի նաև մեկ այլ խորհրդանիշ: Խարույկ վառելով տաքացվում է հողը, որը խորհրդանշում է գարնան մոտալուտ գալը: Այս առաջադրանքը կատարելիս աշակերտը օգտվում է հավելված 7-ից և ուսուցչի օգնությամբ հավաքում Տեառնընդառաջի կոլաժը, այնուհետև դասարանում պատմում է տոնի մասին: Ուսուցչի հանձնարարությամբ աշակերտը տանը կարող է կատարել լրացուցիչ հանձնարարություն՝ տեղեկություններ ձեռք բերել Տեառնընդառաջ անվան մասին, փոքրիկ հետազոտություն կատարել՝ իմանալու, թե որտեղից է գալիս այդ անվանումը:

Առաջադրանք 21. Ըստ օրինակի նկարի՛ր տիկնիկ:

Մեր ավանդական գեղեցիկ տոներից է Բուն Բարեկենդանը: Բուն Բարեկենդանը նշվում է Սուրբ Սարգսի տոնից հետո: Այդ օրը պատրաստում են ճոխ սեղան և ուրախ նշում տոնը: Բարեկենդանի տոնը խորհրդանշում է դրախտային կյանքը և համարվում բերկրանքի օր: Բարեկենդանից հետո սկսվում է Մեծ պահքը, և մարդիկ պատրաստվում են Զատկին: Բարեկենդանից սկսվում է Աբեղաթողը, որը տևում է երեք օր: Մարդիկ պատրաստում են տիկնիկներ (Նուրիներ) և բեմադրում ներկայացումներ: Պատրաստում են նաև գաթա և հալվա: Գաթան մեր ավանդական քաղցրավենիքն է, որը պատրաստում են հիմնականում տոն օրերին:

Այս առաջադրանքը կատարելիս ուսուցիչը հանձնարարում է աշակերտին ուսուցչի օգնականի կամ տանը ծնողի աջակցությամբ թղթից կամ ծեփամածիկից պատրաստել նկարում պատկերված տիկնիկը:

Առաջադրանք 22. Պատմի՛ր, թե ինչպես ես դու անցկացնում Ծաղկազարդի տոնը: Նկարի՛ր տոնի՝ քեզ ամենաշատը դուր եկած մասը:

Հայկական մյուս գեղեցիկ գարնանային տոներից է Ծաղկազարդը՝ Հիսուսի մուտքը Երուսաղեմ: Այս տոնին մարդիկ եկեղեցի են այցելում՝ օրհնելու ուռենու ճյուղերը: Մարդիկ գլխներին դնում են այդ ճյուղերից հյուսված պսակներ: Այս տոնը նաև խորհրդանշում է գարնան մուտքը: Առաջադրանքը կատարելիս աշակերտը ուսուցչի հանձնարարությամբ մի քանի նախադասություն է գրում կամ բանավոր սովորում Ծաղկազարդի տոնակատարության մասին: Կարելի է հանձնարարել նաև նկարազարդել Ծաղկազարդի տոնից իրեն դուր եկած մասը՝ անհրաժեշտության դեպքում հուշումներ տրամադրելով: Այս առաջադրանքը կատարելիս աշակերտը ևս մեկ անգամ առնչվում է ազգային-եկեղեցական տոնացույցին, մոտենում նրան:

Առաջադրանք 23. Ներկի՛ր ներքևում պատկերված հավկիթները քո նախընտրած գույներով և նախշերով:

Մյուս կարևոր և սիրված տոներից է Զատիկը կամ Հիսուս Քրիստոսի Հարության տոնը: Շատ ժամանակ առաջ Հիսուսն ապրում էր և մարդկանց սովորեցնում սեր և բարություն: Ոմանց դուր չեկան նրա ասածները, նրան խաչի վրա բարձրացրեցին (խաչեցին) և սպանեցին: Ըստ քրիստոնեական հավատքի՝ Հիսուսը

վերակենդանացավ Զատկի կիրակի օրը: Ահա թե ինչու է Զատիկն այդքան գեղեցիկ նշվում: Դա հույսի և նոր սկզբի խորհրդանիշն է: Զատկի տոնին կա շատ գեղեցիկ ավանդույթ: Շաբաթ երեկոյան եկեղեցիներում կատարվում է ճրագալույցի պատարագ: Պատարագի վերջում մարդիկ եկեղեցում վառում են մոմերը և տանում իրենց տները: Զատկի տոնին ներկում են հավկիթներ: Այս առաջադրանքի նպատակն է աշակերտին ավելի մոտիկից ծանոթացնել մեր եկեղեցական տոնացույցի գլխավոր տոներից մեկին՝ Զատկին: Առաջադրանքը կատարելիս աշակերտը սկզբում վերցնում է կարմիր մատիտը, պատկերված սպիտակ հավկիթներից մեկը պարտադիր ներկում կարմիր գույնով, իսկ մնացած հավկիթները զարդարում իր նախասիրությամբ: Այս առաջադրանքի նպատակներից է նաև աշակերտի մոտ զարգացնել գեղագիտական ճաշակը:

Առաջադրանք 24. Կարդա՛ ընկերոջդ հետ և պատասխանի՛ր հարցերին:

Աշակերտը պետք է ծանոթանա նշված տեքստին: Ընթերցանության դժվարության դեպքում կարելի է կազմակերպել զույգերով աշխատանք և հանձնարարել դասընկերոջը կարդալ գիրք-տետրում գրված տեքստը: Տեքստը կարդալուց հետո զույգերով պատմում են այն և պատասխանում հարցերին:

Ո՞վ է ստեղծել հայոց գրերը (տառերը):

Ո՞ր թվականին են ստեղծվել հայոց գրերը:

Որտե՞ղ է գտնվում Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը:

Առաջադրանք 25. Նշի՛ր՝ ի՛նչ եկեղեցական տոներ գիտես, և ամեն տոն ի՛նչ խորհրդանիշ ունի:

Գրի՛ր դրանց անվանումները և տոնը խորհրդանշող բառը կամ բառերը:

Այս առաջադրանքի նպատակն է ստուգել աշակերտի մնացորդային գիտելիքը: Աշակերտը գրում է տոների անվանումները, ինչպես նաև տոնը խորհրդանշող բառերը: Առաջադրանքի վերջում, եթե ուսուցիչը նկատում է, որ նյութը աշակերտի կողմից ամբողջովին յուրացված չէ, ապա կարող է այս առաջադրանքը կրկնել մի քանի առաջադրանքից հետո: Գրավոր խոսքի դժվարություն ունեցող երեխաների հետ կարելի է առաջադրանքը նաև բանավոր կատարել կամ տալ տոների անուններով քարտեր և հանձնարարել, որ արտագրեն իրենց ծանոթ տոների անունները:

Ազգային փոքրամասնություններ

Հայաստանի Հանրապետությունում ապրում են տարբեր ազգեր, որոնք կոչվում են ազգային փոքրամասնություններ: Նրանք մեզ հետ միասին զարգացնում են Հայաստանի մշակույթը, արվեստը, տնտեսությունը և այլ ոլորտներ: Հայաստանում ազգային փոքրամասնություններ են եզդիները, հույները, ասորիները, մոլոկանները:

Առաջադրանքներ 26, 27, 28, 29, 30. Ընկերոջդ հետ կարդա ազգային փոքրամասնությունների մասին կարճ տեղեկատվությունը:

Այս առաջադրանքների նպատակն է սովորողին ծանոթացնել այլ էթնիկ խմբերի մշակույթին և կենցաղին: Այս առաջադրանքի վերջնարդյունքն է զարգացնել դաստիարակության մարդասիրական

սկզբունքը: Աշակերտները կարող են կարդալ զույգերով, այնուհետև պատմել տեքստը: Ընթերցանության դժվարության դեպքում կարող է կարդալ զույգերից միայն մեկը, իսկ մյուսը՝ լսել: Ուսուցիչը կարող է հուշող հարցերով ամփոփել դասը:

Եզդիները Հայաստանում առանձին ազգային ենթախումբ են: Նրանք Հայաստանի Հանրապետության ամենամեծ ազգային փոքրամասնությունն են: Նրանք Հայաստանում ճանաչվել են որպես առանձին էթնիկ խումբ և լավ ինտեգրված են հայ հասարակությանը՝ ունենալով կրոնական ազատություն: Պետության կողմից չկա միջամտություն նաև նրանց մշակութային ավանդույթների հարցում:

Եզդիները արևապաշտ են, և իրենց տաճարների գմբեթներին տեղադրված է արևի սկավառակը: Եզդիները բնակվում են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերում:

Հայաստանում հույները բնակվել են դեռևս Տիգրան Մեծի օրոք, երբ վերջինս նրանց Կիլիկիայից տարաբնակեցրեց Տիգրանա-կերտում: Սակայն հույների մեծ ներհոսք եղավ ավելի քան երկու հարյուր տարի առաջ՝ 1760-ականներին, երբ վրաց Իրակլի թագավորի հրավերով Օսմանյան կայսրությունից մեծ թվով հույն հանքափորներ տեղափոխվեցին և բնակություն հաստատեցին Հայաստանում՝ ներկայիս Լոռու մարզում: Հայաստանի տարբեր համայնքներում ապրող հույները համախմբված են հունական համայնքներում: Հույներն Հայաստանի Հանրապետությունում այժմ ապրում են Լոռու մարզի տարբեր գյուղերում, ինչպես նաև Շիրակի մարզկենտրոն Գյումրիում: Հույները քրիստոնյա են, դավանում են ուղղափառություն:

Ասորիները աշխարհի հնագույն ժողովուրդներից են, որոնք այսօր չունեն պետություն և սփռված են ամբողջ աշխարհով: Ասորիները Հայաստանում ապրող ազգային փոքրամասնություն են: Նրանք նույնպես քրիստոնյա են: Ասորիներն ապրում են Արարատի մարզի Վերին Դվին, Դիմիտրով, Կոտայքի մարզի Արզնի գյուղերում և Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղում: Այս առաջադրանքը, ինչպես և նախորդը, նպատակ ունի աշակերտի մոտ զարգացնել դաստիարակության մարդասիրական սկզբունքը:

Հայաստանում իրենց համայնքն ունեցող ազգային փոքրամասնություններից են մոլոկանները, ովքեր քրիստոնյաներ են, սակայն չեն ընդունում խաչը: Նրանք Հայաստան են տեղափոխվել հիմնականում 18-րդ դարում, ցարական Ռուսաստանի իշխանությունների կրոնական հետապնդումների պատճառով: Մոլոկանները ռուսներ են, սակայն՝ առանձին կրոնական համայնքի ներկայացուցիչներ: Հայաստանում մոլոկանները հիմնականում ապրում են Լոռու մարզում, մասնավորպես՝ Տաշիր քաղաքում, իսկ ավելի վաղ՝ Վորոնցովկա, Ֆիոլետովո գյուղերում, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքում: Այս առաջադրանքը, ինչպես և նախորդ երկուսը, նպատակ ունի աշակերտի մոտ զարգացնել դաստիարակության մարդասիրական սկզբունքը:

Առաջադրանքները կատարելիս աշակերտն ուսումնասիրում է գիրք-տետրում տեղադրված ուրվագծային քարտեզը, ներկում է այն մարզերը, որտեղ բնակվում են եզդիները, հույները, ասորիները, մոլոկանները: Դժվարությունների դեպքում կարելի է տրամադրել հուշումներ:

Առաջադրանք 31. Ընկերոջդ հետ կարդա՛ պատմությունը: Պատմի՛ր և պատասխանի՛ր հարցերին:

Այս առաջադրանքի կատարման համար ուսուցիչը կարող է հանձնարարել զույգերով կարդալ տեքստը և պատմել: Նա կարող է հուշող հարցերի միջոցով ամրապնդել տեքստը, օրինակ՝ ո՞ր պետությունն է առաջինը ընդունել քրիստոնեությունը, ի՞նչ էր քարոզում Քրիստոսը, քրիստոնյաները ինչպիսի՞ն պետք է լինեն, ինչպե՞ս պետք է վարվեն այլոց հետ, ինչպե՞ս են անվանում նիզակը, որով հարվածել են խաչված Քրիստոսին և այլն: Այս առաջադրանքը աշակերտի մոտ զարգացնում է բարոյական դաստիարակության սկզբունքը:

Առաջադրանք 32. Կարդա՛/լսի՛ր Գրիգոր Լուսավորչի մասին պատմությունը: Ասա՝ ինչով է հայտնի Խոր Վիրապը:

Այս առաջադրանքի նպատակն է աշակերտի մոտ զարգացնել բարոյական, մարդասիրական դաստիարակության սկզբունքները: Առաջադրանքը կատարելիս ուսուցիչը կարող է հուշող հարցեր տալ և ամրապնդել հիմնական տեղեկությունները, օրինակ՝ ո՞ր թվականին է քրիստոնեությունը հռչակվել որպես պետական կրոն, ո՞ր թագավորի կողմից: Որտե՞ղ էր ապրում Գրիգոր Լուսավորիչը բանտարկվելուց հետո:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Հայ առաքելական եկեղեցու առաջին կաթողիկոսն է: Հենց իր ջանքերի շնորհիվ և Տրդատ 3-րդ թագավորի օրոք Հայաստանը քրիստոնեությունը ճանաչեց որպես պետական կրոն: Ավելի քան 1700 տարի է՝ մենք քրիստոնյա երկիր ենք: Բազմադարյան մեր պատմության ընթացքում կրել ենք բազում զրկանքներ, սակայն երբեք կրոնափոխ չենք եղել և չենք ուրացել մեր կրոնը: Ուսուցիչը պետք է ներկայացնի Խոր Վիրապի պատմությունը,

որից հետո հարցերի միջոցով ամրապնդի հիմնական տեղեկությունը: Առաջադրանքը կատարելիս ուսուցիչը կարող է ներկայացնել նաև լրացուցիչ նյութեր, մասնավորապես՝ պատմել Հայ առաքելական եկեղեցու կողմից սրբացված անձանց մասին:

Առաջադրանք 33.

ա. Քարտեզի վրա ցո՛ւյց տուր, թե որտեղ է գտնվում Արտաշատ քաղաքը, այնուհետև Արտաշատի կողքին գտի՛ր և նշի՛ր Խոր Վիրապը:

բ. Քարտեզի վրա փորձի՛ր գտնել նաև պատմական այլ հուշարձաններ և գրի՛ր/ասա՛ անվանումները:

Այս առաջադրանքը նախորդի տրամաբանական շարունակությունն է: Աշակերտը քարտեզի վրա գտնում է Արտաշատ քաղաքը, այնուհետև գտնում և մատնանշում է Խոր Վիրապը: Եթե աշակերտը եղել է Խոր Վիրապ վանական համալիրում, կարող է ներկայացնել իր բառերով և կիսվել իր տպավորություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Հ. Սվաջյան և այլք, Արդյունավետ հարմարեցումներ: Որակյալ կրթություն: Ձեռնարկ մանկավարժների համար: Եր.: Էդիթ Պրինտ, 2022. - 142 էջ:
2. Բդոյան Վ. Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ, Երևան, ԵՊՀ հրատ., 1974, 288 էջ:
3. «Իմ հայրենիքը» առարկայի չափորոշիչ և օրինակելի ծրագրեր:
4. Խառատյան Հ., Խաչատրյան Շ., Ազգային փոքրամասնությունների միջազգային իրավունքի նորմերը (Հայաստանի Հանրապետության օրինակով), Հայ ժողովրդական մշակույթ-15, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2010, էջ 226-240:
5. Հակոբյան Թ. Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, 518 էջ:
6. Հայ ժողովրդական տոները / Հ. Խառատյան-Առաքելյան; Խմբ.՝ Լ. Աբրահամյան. Երևան 2000, 208 էջ:
7. Հայ եկեղեցու պատմություն IV-V դասարաններ: Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար: /Ա. Ղուկասյան, Վ. Պարսամյան, Ա. Գյուլբուդաղյան, Ա. Նազարյան.-Երևան: Կրթական բարեփոխումների կենտրոն, 2003, 152 էջ:
8. Պապոյան Հ. Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում (դասախոսությունների նյութեր), Երևան, 2013, 303 էջ:
9. Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Երևան, Արեգ, 1998:
10. Короткова М. В., Студеникин М. Т. Методика обучения истории в схемах, таблицах, описаниях: Практ. пособие для учителей. М.: 1999.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ 5»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ